կան է եւ յառաջադիմական, ինչ որ նորոգիչ է եւ վերականգնիչ անկեալ ազգութեանց, ինչ որ ազնուացուցիչ է եւ բարձրացուցիչ մարդկային արժանաւորութեան, այս ամէն բարիքներու ճաշակին անգամ տակաւին առած չենք։ Ի՞նչպէս կարող ենք առնուլ. — Յառաջադէմ ազգաց բարի օրինակին միայն հետեւելով, սրտի եւ մտքի հիմնաւոր մշակութեամբ, բարոյական եւ մտաւորական զարգացմամբ, անգուլ եւ արիաբուն աշխատութեամբ։ Ասոնք զի ամէն տեղ աշխատասէրներուն են միայն, որ կը յառաջանան, կ'իշխեն եւ կը խնդան. իսկ անաշխատներն՝ կամ գերի են, կամ բռնաւոր, կամ կը հեծեն, կամ կը սոսկան։

Ա. յոգն տեսայ ես իմաստնեայ ազգութեանս եւ Ճանապարհորդութեանս մէջ, և այս համոզմամբ մատուցանելով ներկայ համառօտագիր Տեղեկագիրս Ամեն. Արքեպիսկոպոսին եւ Պատուական ժողովրդեան

Ամեն

խոնարհական ակնածութեամբ

17 Մարտ 1874 ամ Յերուսաղէմ

Ամենայնի Վարդապետ Մուրատեան

---

## ԲԵԹՂԵՀԷՄԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԹՆԴԻՐ

(Հարունակութիւն. տես թիւ 4.)

Այս վարագոյրը (որ այժմ չը կայ) Ս. Ծննդեան Այրի՝ մէջ Եկեղեցւոյ կողմի սանդուխի վերի ծայրէն սկսեալ մինչեւ Մասրն կը ձգուէր եւ բոֆէն վար մինչեւ գետին որմերն ամբողջ կը ծածկէր, ոռ-լամպայէ շինուած էր, վերան կային պատկերներ Քրիստոսի Ս. Ծննդեան, յԵգիպտոս երթալուն, Աւետման, Հովիւներու, ժամանոյն որոգայթը, երեք տեղ լատինական նշաններ, երկու ձեռք իրարու վրայ և անոնց քովերը Գաղղիարէն և Լատիներէն լեզուաւ, Թագաւորութիւն է հետեւեալը. «Զնուէրս տուեալս յաւագայ Թագաւորայն Ֆրանկայ, Հրդեհիւ դայրեալս. ամենաբրխասնեան Գաղղիա վերհասատեաց»։ Ասանցմէ զատ վարագոյրի մէկ ծայրէն մինչև միւսն մէկ ձեռաց լայնութեամբ երկդծի մէջ Լատիներէն գրով Աւետարանէն առնուած խօսքեր, ինչպէս «Փառք ի բարձունս» և այլն գրուած էին։ Վերջապէս գանազան գոյներով նկարուած գեղեցիկ տեսք մի ունէր, որոյ առթիւ պատկերավարագոյր անուանեցինք.

Իսկ հին վարագոյրը. բոֆէն վար՝ կէս կանգնոյ չափ էր. այս վարագոյրը երբ Բդեշխը մի անգամ Բեթզեհէմ գնաց իբրեւ թէ լատինաց բռնի կախած վարագոյրը իջեցնելու, տեսաւ. նոյնպէս ուրիշ անգամ երբ Լատինաց կախածը վար առաւ և ի Գաղղիա շինուածը կախեց, դարձեալ հին վարագոյրը իւր տեղն էր իւր նախկին վիճակով հանդերձ ծոպքերով, որք վարագոյրի ստորին կողմն են և մինչեւ հիմա եւս կայ։ Լատինք կ'ըսեն թէ Հայք և Յոյնք կարելով կարելով՝ կէս կանգնոյ չափ մնացած է հին վարագոյրը. բայց այս սուտ է. վասն զի եթէ վարագոյրը կտրուած լինէր. պէտք էր ծոպքերն չունենար. որովհետեւ վարի կողմն լինելով՝ ամենէն առաջ անոնք պէտք է կտրուէին։ Իսկ նորա վերայ եղած նշաններու մասին ամբողջին համար բան մը չենք կարող ասել. սակայն կան նշաններ, որ Լատինական են։

Մարտ 8ին Մեր փոխանորդին հետ գրեցինք, որ Յունաց փոխանորդին հետ լինկերութեամբ աշխատի կարե-

digitised by A.R.A.R.@

ի Եզանին շատ կախուած վարագոյրը վար առնելու համար։ 14 ին Փոխանորդը հեռագրաւ յայտնեց թէ Բ. Դուռը խոստացաւ այս խնդիրն կարգադրել և մեր իրաւունքն ևս պաշտպանել։

Մարտ 15 ին Բ. Դուռը Բգեշխին կը հեռագրէ, թէ՝ Հայք կը բողոքեն իրենց մէկ պատկերը Լատինաց տալուելու մասին. եւ միանգամայն թէ պատկերի եւ թէ վարագոյրի մասին բացատրութիւն կը պահանջէր։ Բգեշխը կը պատասխանէ թէ ձեր հրամանը կատարեցի, որովհետեւ հրամանագրի մէջ չորս պատկեր Հայոց և մէկ պատկեր Լատինաց նշանակուած էր։ Վարագոյրի մասին եւս կը պատասխանէ թէ՝ ինք միայն Բ. Դրան հրամանը կատարած է։ Մի և նոյն օրը Բգեշխը մեզ ասաց, որ այն տեղը, ուր մէկ պատկեր կ'ուզէք կախել, կախեցէք. սակայն նոր ցոյց տուած տեղը մեր պատկերին իսկ տեղը չէր, այլ Լատինաց ատորերկրեայ Ճանապարհին՝ Ս. Ա դրին մէջ բացուած դրան Ճակատն էր. ուստի մեր կողմէն պատասխանուեցաւ, թէ՝ մեր պատկերին տեղը Լատինաց պատկերը կախեցէք, ուր Լատինք բնաւ պատկեր չ'ունէին. երբ զայն վար կառնէք, մեք մեր պատկերը կը կախենք։

Այս խնդիրներն հեղհեղուկ ուրիշ կերպարանք առին. Լատինաց և Յունաց մէջ կռիւներն աւելի սաստկացան։ Մարտի 25 ին Լատինք իրենց Մաղկազարդին օրը, դրան բացման հանդէսն կատարելու առթիւ, հանդիսաւոր թափորիւ իրենց վանուց փողոցի դռնէն դուրս ելելով՝ և Ս. Մինասեան Եկեղեցւոյ փողոցի երկաթեայ փոքր դռնէն ներս մտնելով՝ սիւնազարդ գաւթէն սկսան թափորանման յառաջ երթալ, որոց Յոյնք բազմութեամբ ընդառաջ ելելով՝ կը դիմադրեն խառնելու համար, և ահա կռիւ կը սկսի. և երկուստեք զիրեար բրածեծ կ'առնեն. զոքիր կը միջամտէ. հիսնապետի մի մասը կը կոտորի, թափորը կը խանգարի. Լատինք կէս մը սիւնազարդ գաւթի մէջ բացուած իրենց դռնէն ներս կը մտնեն, կէս մը ևս մեր Եկեղեցւոյ դռնէն։ Մեր դրան վերայի կանդեղը կը կոտրի. մեր քշոցը և սեղանին վերայ եղած մեծ խաչը Լատինք կ'առնեն Յունաց զարնելու. 'ի վերջոյ զորքը երկու կողմն եւս ցրուելով՝ կռիւը կը դադրի։ Այս գայթակղելի արարքը մեր վերաբերման ժամանակ տեղի կ'ունենայ։

Ապրիլ 13 ին մի և նոյն պատճառաւ կռիւը կը կրկնուի այսու տարբերութեամբ, որ այս անգամ կռիւը մեզ չ'ունենար մեր Եկեղեցին, որովհետեւ Մարտի 25 ին զէպքին վերայ Տն. Փաղվը հրահանգ տուած էր մեր Եկեղեցւոյն դուռն փակ պահել։ Այս երկրորդ խռովութիւնն ևս մեր սուրբ պատարագի ժամանակ պատահած է։

Այս ամենուն հետեւանքն էր նոյն սուրբ 'գիշերը Ս. Այրի մէջ տեղի ունեցած անտի—քրիստոնէական դէպքը։ Յոյն արքեպ. աշխարհականներ, սուրբերով եւ հրայանոներով զինեալ Ս. Այրի մէջ թէ մեր, թէ իրենց և թէ Լատինաց պատկերներն կոտրտեցին. Լատինաց թէ հին և թէ նոր վարագոյրներն, ընդ նմին և պատկերավարագոյրը, զոր Բգեշխը Մարտ 3 ին կախեց, ոչնչացուցին, Մուրի պատկերներն անհետացուցին եւ սեղանն քար ու քանդ ըրին. մէկ խօսքով հոն, ուր խաղաղութեան և սիրոյ Աստուածը ծնած էր, և ուր ամէն օր խաղաղութեան ու սիրոյ պաշտօնեայներն հաշտութեան պատարագ կը մատուցանէին. յաւեր և յապականութիւն փոխեցին։ Քրիստոնեայ Յունաց ձե-

digitised by A.R.A.R.@

ուստի այս որբասպիտութիւններն գործեցան, ուսկից Սարակինոսներն զգուշացան. և այս իսկ է մեծ ամենի քրիստոնեայ անուան, զոր ժամանակը եւ պատմութիւնը անշուշտ անջինջ արձանագրեցին։

Ապրիլ 14 ին անմիջապէս Բգեշխը Բեթղեհեմ գնաց ուր և գնացին մեր կողմէն զանազան անձինք։ Աժեն տեղ պէտք եղած էֆէնդը ըրին և արձանագրեցին։ Մի և նոյն օրը կանուխ այս գէպքը 'ի Պօլիս Փոխանորդին հեռագրեցինք։

Ապրիլ 16 ին Բգեշխը կրկին Բեթղեհեմ գնաց, մեր կողմէն եւս մի քանի անձինք ղրկուեցան, որք տարին իրենց հետ նորէն կախելու համար պատկերներ։

Բգեշխը երկու օր հոն մնաց և Տէրութեան ծախքով նոր դամասդ վարագոյր մի կախեց. իրաքանչիւր ազգի թէ պատկերը և թէ կանթեղ իրենց տեղն դրաւ. սակայն մեր մէկ պատկերին տեղ Լատինաց պատկերը դրաւ։ Մեզ և Յունաց չը ներեց նոր կանթեղ կամ պատկեր կախել. բայց երկար վիճաբանութէ և առանձնախօսութիւնէ վերջը Հիւպատոսի և Դատաւորի հետ Լատինաց նոր կանթեղներ կախել տուաւ։ Իսկ Մասրի խնդրոյն գալով՝ նորա շինութիւնը տարտամ վիճակի մէջ թողուց և Լատինաց արգելք եղաւ շինելու. որովհետեւ Յոյնք ընդդիմացան ասելով՝ թէ շինութիւնը մեզ կը պատկանի և առ այս հին հրովարտակ հանեցին. ուստի Բգեշխը Մասրի սեղանը առժամանակեայ շինել տուաւ. կանթեղներն եւ վարագոյրներն կախեց։

Այս խնդրոյն այսպէս վերջանալէն ղկնի դարակի (տօլապ) խնդիրը ծագեցաւ։ Դարակը Ս. Մենդեան Այրին Մեր Եկեղեցւոյ կողմի սանդուխին վերայ է, որմին մէջ փորուած։ Այս մասին խիստ և երկայն վիճաբանութիւն եղաւ. Լատինք երկոյս իրենց խօսքը փոխեցին. Բգեշխը կը ջանար, որ Լատինք դնեն դարակը. իսկ Դատաւորը ասելով՝ որ նոքա խօսքերնին միշտ կը փոխեն, պնդեց, որ նոքա չը դնեն և մինչեւ անգամ գործուելիք անիրաւութեան մը չը մասնակցելու համար, ուզեց ձգել երթալ։ Ի վերջոյ դարակը ոչ Մեր և ոչ Լատինաց կողմէն դրուեցաւ և խնդիրը կախ մնաց։

Հուսկ ամենեցուն Բգեշխը պատուիրեց երեք ազգաց, որ իւրաքանչիւրն իրենց արարողութիւններն կատարեն առանց դուրսէն ներս բան մը բերելու, կամ ներսէն դուրս հանելու. այս պատուերին չը հնազանդողին զօրաց սուիններն սպառնացաւ։ Մեք մեր հնազանդութիւնը յայտնելով՝ չորս տարի առաջ Ս. Այրին մէջ ձգուած կըրակի մասին քննութիւն խնդրեցինք։

Որովհետեւ այս ամեն կռիւներուն մէջ բաւական վնասուած էինք, մանաւանդ թէ վերջինին մէջ մեր դարակի իրաւանց կորուստ կը նշմարուէր. ուստի Բ. Դուռը թագրիր ուղղեցինք և նորա մէջ մի առ մի յիշեցինք մեզ եղած զրկանքներն։ Բ. Դուռն նկատելով՝ որ այս կռիւներն վերջ չը պիտի ունենան, եւ որոց հետեւութիւնը ծանր է. ուստի յատուկ Քննիչ որոշեց, որով օր ըստ օրէական խառնուութիւններն սակաւ ինչ դադրեցան։

(Շարունակելի։)



digitised by A.R.A.R.@